# USSD ծառայություն

Մեր քարտապանները կարող են իրականացնել մի շարք գործառնություններ USSD ինտերֆեյսի միջոցով:

**USSD ծառայությունն** ակտիվացնելու համար նախ անհրաժեշտ է դիմել Բանկ և լրացնել համապատասխան դիմումը: Այնուհետև կարելի է օրվա ցանկացած պահի օգտվել USSD ծառայությունից՝ կատարելով հետևյալ քայլերը՝

1. Հավաքել *116# հրամանը,
2. Ընտրել անհրաժեշտ քարտը,
3. Ընտրել լեզուն,
4. Ընդունել գանձումների մասին տեղեկացումը
5. Ընտրել գործողությունը՝

- Մնացորդի հարցում
- Մինի քաղվածք (մինչև 4-5 վերջին գործարքներ)
- Բլոկավորում

Յուրաքանչյուր հարցման ավարտից հետո քարտապանը կստանա SMS հաղորդագրություն «ARCA USSD» բաժանորդից:

Մեկ հեռախոսահամարին կարելի է կցել տարբեր բանկերի մինչև 5 քարտ: Ծառայությունը նախատեսված է դեռևս միայն Beeline բջջային կապի բոլոր բաժանորդների և ArCa համակարգի անդամ բանկերի քարտապանների համար:

# 3D Secure՝ առավել անվտանգ online գնումներ

Մենք ներդրել ենք քարտով ինտերնետային գործարքներ կատարելու առավել անվտանգ՝ **3D Secure համակարգը**: Այն նվազեցնում է **online վճարումների** կայքերում քարտով զեղծարարություններ կատարելու ռիսկերը: Այսուհետ մեր քարտատերերի ինտերնետային գործարքներն ապահովված են լինելու անվտանգության ևս մի մակարդակով՝ sms հաստատումների միջոցով: Online գործարքներ կատարելիս այն քարտատերը, ովքեր արդեն ակտիվացրել են sms հաղորդագրություն ստանալու ծառայությունը, իրենց քարտին կցված հեռախոսահամարին կստանան լրացուցիչ կոդ, որն անհրաժեշտ է լրացնել կայքում գործարքը հաստատելու համար:

Եթե հաճախորդը դեռ չի ակտիվացրել sms ծառայությունը, ապա կարող է մոտանալ մեր ցանկացած մասնաճյուղ և լրացնել համապատասխան դիմումը: Բացի 10 ՀՀ դրամ 1 sms-ի արժեքից, քարտատերը ոչ մի լրացուցիչ ծախս չի կրելու: Անվտանգության 3D Secure համակարգը գործում է այն կայքերում, որոնցում առկա է **MasterCard SecureCode** լոգոն: